Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

10/02/2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ԿԱՐՈՅԻ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍԹՐԵՍԻՆ ՏՐՎՈՂ ՔՈՓԻՆԳ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԼԻԼԻԹ ԿԱՐՈՅԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ՝ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍԹՐԵՍԻՆ ՏՐՎՈՂ ՔՈՓԻՆԳ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» խորագրով ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (02.01.2026, արձանագրություն N2): Ամբիոնի նիստին մասնակցում էին հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ.,

դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ա. Բ. Լոքյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, ք.գ.թ, դոցենտ Մ. Գ. Մարգարյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշչյանը, Լ. Գրիգորյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեր երկիրը վերջին տասնամյակների ընթացքում ապրել է բազմաթիվ ռազմական հակամարտություններով, որոնք խոր հետք են թողել հասարակության հոգեբանական վիճակի վրա՝ առաջացնելով հետտրավմատիկ սթրեսային խանգարում, սթրեսակայունության անկում և արժեքային կողմնորոշումների վերաիմաստավորման խնդիրներ: Քոփինգ ռազմավարությունների ուսումնասիրությունը կարևոր է՝ հասկանալու, թե ինչպես են անհատները հակազադում և հարմարվում ծայրահեղ սթրեսին և վերականգնում հոգեբանական կայունությունը: Հայաստանի սոցիալ-մշակութային համատեքստում, որտեղ հասարակական կապերն ու ավանդույթները կարևոր դեր են խաղում անձի կյանքում, այս ռազմավարությունները յուրահատուկ առանձնահատկություններ են ձեռք բերում:

Ատենախոսը նշում է, որ սույն հետազոտությունն ընդգծում է հետտրավմատիկ անձնային աճի (ՀՏԱ) դերը, որը կարող է խթանել դրական հոգեբանական փոփոխություններ: Եվ կարևորում է ՀՏԱ-ի և քոփինգ ռազմավարությունների փոխկապակցվածության ուսումնասիրությունը՝ հասկանալու, թե ինչպես են մարդիկ իմաստ և նպատակ գտնում տրավմատիկ փորձառություններից հետո: Արժեքային կողմնորոշումների ազդեցությունը ռազմավարությունների ընտրության վրա արդիական է, քանի որ արտացոլում է հայ մշակույթի առանձնահատկությունները:

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից՝ ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել սթրեսային իրադրություններում պատերազմի մասնակիցների քոփինգ ռազմավարությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու տեսական և մեկ հետազոտական գլուխներից:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել որոշ դիտարկումներ, որոնք առավել մանրամասն պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1.Հետազոտության օբյեկտը և առարկան ձևակերպված են գրեթե նույն բովանդակությամբ: Հետազոտության վարկածի ձևակերպումը նկարագրական է և չի բացահայտում փոփոխականների միջև փոխկապվածությունը, ինչը հատկապես կարևոր է աշխատանքի համահարաբերակցական վերլուծության համատեքստում:

2. Հետազոտության 7-րդ խնդիրը իր բովանդակությամբ ավելի շուտ վերաբերում է հետազոտության արդյունքների ընդհանրացման և կիրառման փուլին, քան բուն հետազոտական խնդիր է:

3. Աշխատանքում ուսումնասիրվել են արժեքները, սակայն տեսական հատվածում բացակայում է արժեքային կողմնորոշումների և քոփինգ ռազմավարությունների հարաբերակցության տեսական վերլուծությունը, ինչի արդյունքում արժեքների ուսումնասիրության մեթոդիկայի կիրառումը մնում է ոչ բավարար հիմնավորված:

4.Նպատակահարմար կլիներ եզրակացությունները ներկայացվեին առավել ընդլայնված, ինչը հնարավորություն կտար ամբողջական պատկերացում կազմել թե՛ տեսական, թե՛ փորձարարական վերլուծության արդյունքների մասին, մասնավորապես առաջին և երկրորդ եզրակացությունը լիրաժեք չեն արտացոլում աշխատանքի տեսական վերլուծության բովանդակությունը և տրամաբանությունը:

Երկրորդ՝ «Քոփինգ հակազդումների դասակարգումը» ենթագլխում ներկայացվում են քոփինգների տարբեր 10 դասակարգումներ: Երրորդ՝ «Սթրեսին տրվող քոփինգ ռազմավարությունների մեկնաբանությունը հոգեբանության մեջ» ենթագլխում ներկայացվում են կոնֆլիկտային, սթրեսային, անհանգստություն առաջացնող իրավիճակներում վարքի ռազմավարություններ:

Չորրորդ ենթագլխում՝ «Պատերազմի մասնակիցների վարքի քոփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» ներկայացվում է մարտական գործողությունների մասնակիցների հաղթահարող և ինքնավերահսկող վարքի կամ քոփինգ ռազմավարության խնդիրը:

Ատենախոսության երրորդ՝ «Պատերազմի մասնակիցների սթրեսին տրվող քոփինգ ռազմավարության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: «Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների և ընտրանքի նկարագրությունը» ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրանքը, մեթոդներն ու մեթոդիկաները: Հետազոտությունը իրականացվել է 2023 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ընտրանքը ներառել է 400 անձ, որոնցից 200-ը մարտական գործողությունների մասնակիցներ (40-ը՝ Արցախյան առաջին պատերազմի, 40-ը՝ Ապրիլյան քառօրյա պատերազմի, 40-ը՝ 44-օրյա պատերազմի, 40-ը՝ 2021-2023 մարտական գործողությունների, 40-ը՝ կրկնակի մասնակիցներ), 200-ը՝ չմասնակցած՝ փորձարարական խումբ: Երկրորդ՝ «Հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն» ենթագլխում ներկայացված և վերլուծված են կիրառված մեթոդիկաներից ստացված տվյալները:

Իրականացնելով ծավալուն փորձարարական և տեսական ուսումնասիրություն՝ ատենախոսը հանգել է եզրակացությունների:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 10 հրապարակումներում:

Սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսության ներածության մեջ առաջադրվել են վարկածը, սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նեկայացվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները: Նշվել են հետազոտության մեթոդները և ընտրանքը, գիտական նորույթը և տեսական ու կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Սթրես հասկացությունը հոգեբանության մեջ, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ «Սթրեսի հոգեբանական բութագիրը, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա սթրեսի մեկնաբանության բազմաբնույթ սահմանումները և հայեցակարգերը:

Երկրորդ՝ «Հետվնասվածքային սթրեսի սոցիալ-հոգեբանական դրսևորումները, առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված են հետվնասվածքային սթրեսի սահմանումները, մոտեցումները և հիմնական հայեցակարգերը: ՀՏՍԽ-ն համախտանիշ է, որն առաջանում է տարբեր պատճառների արդյունքում, որոնք պայմանավորված են կատարված իրադարձությունների բնույթով, տրավմատիզացված անձի և շրջապատի հատկությունների առանձնահատկություններով:

Երրորդ՝ «Պատերազմը որպես սոցիալ-հոգեբանական սթրեսային իրողություն» ենթագլխում վերլուծվում են անձի սոցիալ-հոգեբանական փոփոխությունները ճգնաժամային իրավիճակներում, որոնք առաջանում են արտակարգ իրավիճակների, և հատկապես պատերազմի ազդեցությամբ: Չորրորդ՝ «Պատերազմի մասնակիցների տրավմատիզացիայի դրսևորումները» ենթագլխում վերլուծվում է տրավմատիկ իրավիճակների հետևանքներն ու դրսևորումները:

Աշխատանքի երկրորդ՝ «Պատերազմի մասնակիցների քոփինգ հակազդումները, սոցիալ-հոգեբանական բնորոշումը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Այս գլխի առաջին՝ «Քոփինգ հակազդումների բնութագիրը» ենթագլխում ներկայացվում է քոփինգ հակազդումների մեկնաբանությունները տարբեր հեղինակների կողմից:

Հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության ծավալը, կիրառական նշանակությունը՝ **ԼԻԼԻԹ ԿԱՐՈՅԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ՝ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍԹՐԵՍԻՆ ՏՐՎՈՂ ՔՈՓԻՆԳ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ»** ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համարել համապատասխան ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ կարևոր խնդրի լուծում, իսկ **ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆՆ** արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ պետական կառավարման
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Հ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան